ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, 272 էջ:



Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր դարակազմիկ իրադարձություն ունենում է իր վերաիմաստավորման պահանջը: Այդ ճանապարհին ստեղծվում են զանազան աշխատանքներ հուշագրությունների, վկայությունների, ակնարկների տեսքով, որոնք ընդհանրացնելու և գիտական ուսումնասիրության նյութ դարձնելու անհրաժեշտություն է առաջանում: Ակնհայտ է, որ միայն վկայություններով, հուշագրություններով հնարավոր չէ լիարժեք գիտական ուսումնասիրություն կատարել: Դրա համար պահանջվում են նաև համապատասխան արխիվային, փաստավավերագրական նյութեր, տվյալ ժամանակի պարբերական մամուլի հրապարակումների ընդհանրացում, տարբեր հիմնահարցերի շուրջ մասնակից ու ականատես գործիչների պարզաբանումներ և քննարկումներ…

Արցախյան շարժումը և նրա ռազմական փուլը, հիրավի, դարակազմիկ իրադարձություններ էին Հայաստանի նորագույն պատմության համար: Սկզբնական շրջանում հայկական պետականության վերականգնման համար պայքարում, ապա Ադրբեջանի նախահարձակումը կասեցնելու նպատակով Հայոց հայրենական պատերազմի պայմաններում փաստավավերագրական նյութերի հավաքագրումը երկրորդ պլան էր մղված և, հիմնականում, առանձին նախաձեռնությունների մակարդակով էր կատարվում: Հրադադարի հաստատումից հետո քայլեր ձեռնարկվեցին արցախյան ազատամարտի տարեգրության հիմքերը ստեղծելու, արխիվային նյութերի հավաքագրման ու համակարգման ուղղությամբ: Այս տեսակետից դրվատելի է »Կաճառ» գիտական կենտրոնի գործունեությունը, որի կարևոր ուղղություններից մեկը Արցախի նորագույն պատմության աղբյուրագիտական հենքի ստեղծումն ու հարստացումն է: Կենտրոնի հնարավորություններն ու գործունեության բոլոր ձևերը օգտագործվել են հասարակության ու քաղաքացիների գիտակցության մեջ այն գաղափարի ամրապնդման համար, որ հայ ժողովրդի պատմավավերագրական ժառանգության պահպանումը, բազմապատկումը և զգուշավոր օգտագործումը ոչ միայն բխում են հասարակության ժամանակակից պահանջմունքներից, այլև հասարակության ու պետության բարոյական պարտքն է ապագա սերունդների առջև: Մասնավորապես հավաքագրվել, դասակարգվել, գիտական մշակման են ենթարկել վավերագրեր, պաշտոնական փաստաթղթեր, տարաբ-

նույթ հրատարակություններ, լուսանկարներ, տեսաֆիլմեր, ձեռագրեր և Արցախի նորագույն պատմությանը վերաբերող այլ նյութեր:

Այս մասին տեղեկացնում է Կենտրոնի համանուն տարեգրքի 3-րդ հատորի հրապարակումներից մեկը: Ներկայացնելով Կենտրոնի գործունեությունը՝ հոդվածագիրը նշում է, որ պատմական սկզբնաղբյուրների(արխիվային փաստաթղթերի կամ վավերագրերի) հրապարակման, դրանք գիտական շրջանառության մեջ դնելու ճանապարհով նաև անհրաժեշտ պատմական գիտելիքներ են տարածվել մեր ազգաբնակչության, հատկապես՝ երիտասարդության շրջանում:

Նշվում է նաև, որ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է եղել ազգային ազատագրական պայքարի նոր փուլի տարեգրության հիմքերը ստեղծելու, Արցախյան պատերազմի, Պաշտպանության բանակի կազմավորման և մարտական ուղու պատմությունը լիարժեքորեն վերստեղծելու, համակողմանի ու գիտականորեն ուսումնասիրելու կարևոր գործը: Ինչպես պարզվում է նշյալ հոդվածից, Պաշտպանության բանակի կազմավորումը, նրա հաղթական մարտերը, և ընդհանրապես, մեր հայրենական պատերազմի մյուս կողմերը իրենց դարակազմիկ նշանակությամբ արժեքավորելու նպատակով ստեղծվել է հատուկ այդ հարցերով զբաղվող թեմատիկ(պրոբլեմատիկ) խումբ, որի առաջ դրված են հետևյալ խնդիրները.

ա) Հավաքել, կենտրոնացնել ու համակարգել առանձին անհատների մոտ պահվող նյութերը(փաստաթղթեր, ձեռագրեր, հուշագրություններ, հրամանագրեր, մարտական զեկույցներ, լրագրային կտրածոներ, քարտեզներ, և այլն), դրանք գիտականորեն մշակել ու դասակարգել ըստ բովանդակության:

բ) Գրի առնել կամ ձայնագրել դեպքերի մասնակիցների, հերոսների, հրամանատարների հուշերը և վկայությունները, դրանք վերածել փաստաթղթերի՝ վավերացնելով առնվազն հինգ մասնակիցների կամ ականատեսների ստորագրություններով կամ էլ նոտարական կնիքով: Այդ փաստաթղթերը դնել գործերի մեջ՝ մշտապես փորձաքննության ենթարկելով, շարադրված փաստերը համադրելով այլ վկայությունների հետ և մշտապես թարմացնելով կամ ճշգրտելով:

գ) Պահպանված սակավաթիվ վավերագրերը, աշխատանքային տետրերը, փաստաթղթերը մանրազնին ուսումնասիրել և ժամանակի ընթացքում պատրաստել հրատարակության՝ որպես ապագա ուսումնասիրությունների համար աղբյուրագիտական հիմք:

դ) Անհրաժեշտ հիմքերի ստեղծումից հետո ձեռնարկել ,Կաճառ տարեգրքում ռազմապատմական բնույթի նյութերի, Արցախյան պատերազմի, ՊԲ-ի կազմավորման ու մարտական ուղու պատմության հարցերը լուսաբանող հոդվածների, ինչպես նաև զանազան փաստաթղթերի, վավերագրերի, գրախոսությունների, տեղեկությունների, ռազմագիտական ու պատմական այլ նյութերի հրատարակումը:

ե) Հավաքել 1988-1994 թթ. օրաթերթերի ու մյուս պարբերականների հավաքածուները, 1995-2008 (և հետագա) թվականների թերթերից ու այլազան հրատարակություններից հանել խնդրո առարկա թեմային վերաբերող նյութերն ու հրապարակումները:

զ) Արցախյան շարժման ու պատերազմի վերաբերյալ թեմատիկ(կամ մասնագիտական) գրադարան ստեղծելու նպատակով հավաքել Արցախում, Հայաստանի Հանրապետությունում, Սփյուռքում տպագրված գրքեր, գրքույկներ, լրագրեր, ժողովածուներ, քարտեզներ, պատկերազարդ ալբոմներ, պլակատներ, օրացույցներ և այլ տպագիր նյութեր:

է) Ստեղծել լուսանկարների հավաքածուներ(ալբոմներ), հավաքել հերոսների, զոհվածների լուսանկարների, մարտական գործողությունների և բանակային կարևոր

միջոցառումների ու առօրյայի առանձին դրվագներ(լուսանկարային), ժապավեններ, նեգատիվներ, սահիկներ և այլն:

ը) ժամանակի ընթացքում ստեղծել Արցախյան շարժման ու պատերազմի նշանավոր գործիչների, տարեգիրների, զոհված ազատամարտիկների, հերոսների ու աչքի ընկած մյուս պետական, քաղաքական ու ռազմական գործիչների անձնական գործեր, որոնցում հնարավորինս ամփոփված կլինեն նրանց մասին բոլոր տվյալները:

թ) Հավաքել ու համակարգել(հարկ եղած դեպքում՝ վերականգնել կամ բազմացնել) տեսաֆիլմեր, ձայնագրություններ(կասետա, ժապավեն), անհրաժեշտ տեղեկություններ պարունակող մագնիսական սկավառակներ:

ժ) Հավաքված, կենտրոնացված ու համակարգված նյութերի ու ռազմական գործողություններն արտացոլող ռազմական քարտեզների տվյալների համադրմամբ ու փաստերի հիման վրա վերստեղծել մարտական գործողությունների իրական պատկերը և կազմել ճշգրիտ սխեմատիկ քարտեզներ:

ի) Հավաքված նյութի ընձեռած հնարավորությունների սահմաններում գրել ինչպես ՊԲ-ի, այնպես էլ նրա զորամասերի մարտական ուղու ամբողջական ու հավաստի պատմությունը:

լ) Հետագայում ձեռնարկել Արցախյան կոչված, բայց իրականում հայոց հայրենական պատերազմի պատմության գիտական ուսումնասիրության հիման վրա ակադեմիական-գիտական բազմահատորյակի ստեղծումը:

խ) Կապեր հաստատել Արցախի, ՀՀ-ի թանգարանների, համապատասխան հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների հետ՝ փորձի ու նյութերի կամ տեղեկատվության փոխանակման նպատակով:

ծ) Կահավորել ընթերցասրահ, ուր կարող են հաճախել ու աշխատել բուհերի դասախոսներ, գիտական աշխատողներ, գիտական թեզեր, հոդվածներ պատրաստողներ, կուրսային ու դիպլոմային աշխատանքներ գրող ուսանողներ, ռեֆերատներ գրող սպաներ, ՀՊՊ խմբերի ղեկավարներ, մի խոսքով՝ բնագրերում պատմական փաստերով հետաքրքրվողներ:

կ) Գրականության կենտրոնացման նախկին գործուն համակարգի փլուզումից հետո դժվարացել է ոչ միայն դրանց հայթայթումը և հաշվառումը, հետևաբար ոչ միայն պետք է հավաքել 1992-2009 թվականների ընթացքում տպագրված գրքերը, այլև կազմել մատենագիտական հրատարակություններ՝ խթանելով հետագա ուսումնասիրությունները:

Ինչպես տեսնում ենք՝ առաջադրված է լայն գործունեության մի ասպարեզ, որտեղ կարող ենք մեր ջանքերը ներդնել նաև մենք՝ երիտասարդներս: Անշուշտ, այդ ծրագիրը մեկ կամ երկու տարում հնարավոր չէ իրականացնել, և ինչպես հասկացվում է խնդրո առարկա հրապարակումից, այն երակարաժամկետ է, որի ուղղությամբ առաջին քայլերն արդեն իսկ արված են: Դրանցից կարելի է առանձնել նաև գրախոսվող տարեգրքի հրատարակումը, որտեղ, բացի տեսական հարցերից տպագրվել են նաև Արցախյան ազատագրական պայքարի մասին պատմող վավերագրական նյութեր: Դրանցից առաջինը ԱրՊՀ դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մինասյանի «Ակնարկներ հանուն Արցախի նահատակված չափարցիների մասին» հոդվածն է: Ուշագրավ հրապարակումներից կարող ենք նշել Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում և նրա շուրջ 1991 թ. օգոստոսին տեղի ունեցած դեպքերի մասին Գ. Գ. Նարիմանյանի օրագրությունները, հուշերը, վկայությունները: Իսկ ահա նախկին հրամանատար Գ. Մ. Բաղալյանի «Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի ինքնապաշտպանական ջոկատը» և Գ. Է. Ղարիբյանի «Իմ անցած մարտական ուղին» հրա-

պարակումները հետաքրքիր մանրամասներ են ներկայացնում համապատասխանաբար Մարտակերտի և Մարտունու ռազմաճակատներում ծավալված մարտերի վերաբերյալ:

Իհարկե, մենք հիմնականում անդրադարձանք Արցախյան ազատագրական պայքարին նվիրված հրապարակումներին, սակայն, ուշագրավ նյութեր տարեգրքի 3-րդ - հատորում կան, որոնք ընթերցվում են հետաքրքությամբ և ստիպում են խորհելու ոչ հեռու անցյալի մասին:

Համոզված ենք, որ «Կաճառ» տարեգրքի 3-րդ հատորը օգտակար կլինի ինչպես մասնագետների, ուսանողների, այնպես էլ մեր Արցախ աշխարհի պատմությամբ ու նշանավոր զավակների կենսագործունեությամբ հետաքրքրվողների համար:

Հովիկ ԱՎԱՆԵՍՈՎ

ՄՄՀ պատմության ամբիոնի դասախոս